ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

04.04.2025 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի մարտի 30-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Տեղական ինքնակառավարման մարմինների 2025թ. մարտի 30-ի արտահերթ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ երկրորդ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում առևտրային բանկերից 3

աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ, որոնց հիման վրա Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկանքները իրենց մեջ ներառել են տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ելքերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամների մնացորդների վերաբերյալ:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները, ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներկայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերը իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, նվիրատվություն կատարած անձանց մասին տվյալների, ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունը իրականացրել է՝

- Բանկերից ստացված տեղեկանքների
- Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերի
- Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի
- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց , որ նախընտրական հիմնադրամներ կատարվել են ընտրական օրենսգրքով չսահմանված սուբյեկտների կողմից նվիրատվություններ: Մասնավորապես՝

«Եվրադաշինք» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամ իրավաբանական անձի կողմից փոխանցված՝ 250.000 դրամ, ինչպես նաև տերմինալի միջոցով փոխանցված՝ ընդհանուր 104. 500 դրամի անանուն նվիրատվությունները փոխանցվել են պետական բյուջե:

«Իմ հզոր համայնք» կուսակցության նախընտրական հիմնադրամի հաշվին անանուն մուծված 200. 000 դրամ նվիրատվությունը փոխանցվել է պետական բյուջե:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությունների դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 01. 04. 2025թ մարել 143. 000 դրամի պարտավորություն:

«Իմ հզոր համայնք» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 02. 04. 2025թ մարել 3 914 267 դրամի պարտավորություն:

Համադրելով բանկերից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս ք ու մ է***, որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝ Տ. ԲԱԲԻԿՅԱՆ